


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ
Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ
Հրկու բիւ մեկ ծրարով
Տարեկան . . 11 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՍԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 Տօլար
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ

Ծրանոցման տոմար
20 ւանդիս



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄՆՆ ՃՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Հ Ա Ս Ց Է

Rédaction du journal

„Iraouunk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА

Գրոշրիւնք եւս
չեմ տրոշիր

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Աւստրիոյ և Ռուսիոյ զեռպան-
ներուն պատրաստած ծրագիրը
որ Մակեդոնիան խաղաղեցնելու
նպատակաւ գծուած է կըրեն,
այսօր եւրոպական մամուլին ա-
նըսպառ նիւթ կը մատակարարէ:
Ռուսիա և Աւստրիա կը պնդեն
իրենց ծրագրին վրայ: Սուլթա-
նը փախուստի ճամբայ կը փնտ-
ռէ զայն չընդունելու և այս նը-
պատակաւ երկու միջոցի դիմած
է. առաջին՝ միւս չորս մեծ պե-
տութեանց կարծիքը առնելու
պատրուակաւ, անոնցմէ մէկին
կամ երկուքին ընելիք դիտողու-
թիւնը իրեն ուժ առնելով ծրա-
գիրը չընդունիլ կամ անոր գոր-
ծադրութիւնը ձգձգել: Երկրորդ-
ձեռքի տակէ խալիֆ խաւփանին
գործուած ըլլալու երեւոյթ տալ
ու զանոնք հանգարտեցնելու հա-
մար ժամանակ շահիլ մինչեւ որ
պետութիւնները զբաղեցնող նոր
ժանրագայն խնդիր մը ծագի աչ-
ռարհի ու է մէկ կէտին վրայ:
Փախուստի համար Սուլթանին
փնտրած տղա երկու ճամբաներն
ալ իրեն ապահովութիւն դեռ
չկրցին տալ: Նախ պետութիւն-
ները բացի Գերմանիայէ, բնաւ
առարկութիւն չըլին Աւստրո-
Ռուս ծրագրին, Գերմանիան ոչ
ընդունեց և ոչ ալ մերժեց, եւ
ինչպէս կըրեալ, կրէտական խնդ-
րոյն կարգադրման ատեն ըրա-
ծին նման՝ ձեռնպահ մնալ կողմէ,
Իտալիան ծրագիրը ընդունելէ
առաջ ուսումնասիրել ուզեց, բայց
ցարդ առարկութիւն մը չըրաւ,
որ ընդունիլ կը նշանակէ: Փը-
րանա՝ արդէն Կոմս Լամստորֆի
և Մ. Տէլգաւսէի միջեւ աւելի ա-
ռաջ կայացած կարգադրութեան
համեմատ, Ռուսիոյ կամքին հա-
մակերպած է: Գալով Անգլիայի
այս ալ գծուած ծրագիրը Մա-
կեդոնիոյ համար ծոնը չտեսնե-
լէ զատ, Հայաստանի բարենո-
րոգմանց գործադրութեան ան-
հրաժեշտութիւնն ալ մատնանիչ
ըրաւ: Վերջապէս այս կերպով
չորս մեծ պետութեանց հանդի-
սատեսութեամբ Սուլթանը Ռու-

սիոյ և Աւստրիոյ հետ գէմառապէմ
կը գտնուի այսօր: Երկրորդ վան-
դակին մէջ փախուած խորամանկ
օձը փորձուած կրէտէի խնդրով իր
պատրաստել փորձած երկրորդ-
ճամբան ալ անել գտաւ, Պոլսոյ
փողոցներուն մէջ ցրուած ու
պատերը փակցուած թրքական
յայտարարութիւնները, թէ խա-
լամ ժողովուրդը խիստ յուզուած
է Մակեդոնիոյ ծրագրին դէմ,
երբէք կշիռ մը չունեցան դիւա-
նագիտական շրջանակներու մէջ:
այլ ընդհակառակը ամէն ոք հա-
մոզուեցաւ թէ այդ յայտարա-
րութիւններու հեղինակը նոյն
ինքն թուրք ոստիկանութիւնն
է, որ ձեռքի տակէ ստացուած
բարձրագոյն հրահանքի մը հա-
մեմատ նախ Աւստրիոյ և Ռու-
սիոյ զեռպաններուն սպառնա-
կան նամակներ զրկած էր՝ իբր
թէ խալիֆ հասարակութեան կող-
մէ, ու յետոյ փողոցները և պա-
տերը յայտարարութիւններով
լեցուցած էր յեղափոխութիւն
և կոտորած սպառնալով, եթէ
Աւստրո-Ռուս ծրագիրը կառա-
վարութեան ընդունուէր:
Սուլթանը ծրագրէն խուսափե-
լու համար իր դիմած այս երկու
ճամբաներուն մէջ անյաշողու-
թեան մատնուելէ վերջ, այսօր
ինքնամիտմամբով մը ստիպողա-
կան «այո» կամ «ոչ» արտա-
սանելու համար իր նախարար-
ներուն հետ խորին խորհրդակ-
ցութիւններու մէջ ընկղմած է:
Արտակարգ նախարարական նիս-
տեր կը գումարուին Երկրորդի
մէջ ամեն օր, բայց դեռ ոչ մէկ
պատասխան չէ տրուած զեռպան-
ներուն:

ՎԵՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՒ ՁԱՐԸ

Էջմիածնէ Լ'Առաքելի կը գրեն:
Ռուս պաշտօնեաներ Տփղիսէ հոս հա-
սան մեր վանքին սեփականութիւն-
ները գրաւելու համար: Անոնք Երե-
ւանէ բերել արուած էին 4000 զին-
ւոր և 3 թնդանօթներ, վախցնելու
համար մեր ծեր կաթողիկոսը, բայց
անոնք այն տեսակ ընդունելութիւն
մը գտան որուն չէին սպասեր:

Վաղարշապատի և շրջակայ գիւղե-
րու հայերը ուզեցին ցոյց մը ընել
այդ ինքնակոչներու դէմ, բայց հա-
թողիկոսը զանոնք համոզեց, փտահե-
ցնելով թէ ինք ուսու կառավարութեան
ոչ մէկ զեղոյթութիւն չը պիտի ընէ, եւ
խօսքը պահեց:
Մկրտիչ Ա. մեծ շքով եւ իր բոլոր
պատուանշաններով զարդարուած ըն-
դունեց Նիքոլա Բ.ի ներկայացուցիչ-
ները, Ռուս պաշտօնեաները առաջար-
կեցին իրեն յանձնել եկեղեցական կալ-
ուածները ըստ կայսերական հրամա-
նին: Կաթողիկոսը ապրիլ շնչով մը
պատասխանեց:
«Էջմիածնի սեփականութիւններուն
մէկ մասը ընծայուած է Պարսիկ կառա-
վարութիւնէն, մէկ ուրիշ մասը Հընդ-
կաստանի հայերէն, որոնք Անգլիոյ
հպատակ են: Մնացեալն ալ նուիր-
ուած է Օսմանեան, Աւստրո-Հունգա-
րական, Հոլանտական եւ այլ պետու-
թեանց հպատակ Հայերէ: Ռուսի այդ
սեփականութիւնները չեմ կրնար յանձ-
նել ուսու իշխանութեան, Ձեր կառա-
վարութիւնը միայն ընծայած է սա
շքանշանները զորս կը կրեմ, առէ՛ք
ատոնք, որովհետեւ ալ չեմ ուզեր
զանոնք կրել»:
Այս ըսելով հանց ուսուական շքա-
նշանները եւ սեղանին վրայ շարեց
ապշած պաշտօնեաներուն առջեւ, Ա-
ստրք Անոր դիմել տուին թէ իրաւունք
չունէր իրենց այդ կերպ գէշ ընդու-
նելութիւն մը ընելու, քանի որ իրենց
պաշտօնին պաշտականութիւնն է որ
միայն կը կատարեն:
«Ես ալ, աւելցուց Կաթողիկոսը, իմ
պարտականութիւնս է որ միայն կը
կատարեմ»:
Ուրի ելաւ, եւ դուռը ցոյց տուաւ
Ձարի ներկայացուցիչներուն, որոնք
եւան գացին շատ ընկճուած:
Էջմիածնի 800 զինուորներէ պա-
շարուած կը մնայ, Անգլո-Ռուս նախա-
զգուշութիւն, որովհետեւ Ամենայն
Հայոց Կաթողիկոսը չը պիտի զիջանի
Ամենայն Ռուսաց կայսեր, նոյն իսկ
եթէ ամբողջ ուսուական բանակը էջ-
միածնայ վրայ քայլէ:
Ն. Ս. Օժոթիւնը աչքն առած է
Սիպերիա աքորուելին ալ, մահն ալ:

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅԵՐԸ ԵՒ ՌՈՒՍ ԴԵՍՊՈՒՆԸ

Գահիրէ հրատարակուող «Ար-
շալոյս» կիսաշաբաթաթիւթի սեպ-
տեմ. 20 թիւին մէջ կը կար-
գանք թէ՛ Ռուսական դիւանա-
գիտական գործակատար Մ. Մաք-
սիմովի իմացած ըլլալով որ Գա-

հիրէի եւ Աղէքսանտրիոյ Հայե-
րը միթինկներ կազմակերպած
են եկեղեցական կալուածներու
գրաւման դէմ բողոքելու հա-
մար, փափաք յայտնած է Աղէք-
սանդրիոյ եկեղեցին այցելել եւ
հայերը համոզել որ այդ շար-
ժումէն ետ կենան: Այս լուրին
վրայ Եգիպտոսի Առաջնորդը Գա-
հիրէէ Աղէքսանդրիա փութացած
է եւ տեղւոյն թաղական Խորհր-
դոյ եւ մէկ քանի վսեմաշուքնե-
րու հետ ընդունած է Ռուս գոր-
ծակալը մեծ յարգանքներով Ա-
ռաջնորդարանին մէջ:
Ռւր քառորդ ժամու ընդհա-
նուր տեսակցութենէ մը յետոյ
Մաքսիմովի ինքն ուղղակի կալու-
ածական խնդրին խօսքը կը բա-
նայ ու կը բացատրէ թէ իր պաշ-
տօնական դիրքը չէր ներքի որ
Հայերուն կողմէ Ձարին ուղղեալ
խնդրագիր մը ընդունի, ցաւ
կը յայտնէ արտառահմանի մէջ
տիրող հակառուս շարժումին մա-
սին որ շատ վտանգաւոր հետե-
ւանքներ կրնայ ունենար կ'ըսէ,
Ռուսիոյ Հայերուն համար:
Արշալոյսի թղթակիցը չակեր-
տած է Մաքսիմովի հետեւեալ
խօսքերը. «Ձարը այդ իւրաքաչ-
յետ հասուն եւ բազմակողմանի
քննութեան ստորագրած է, Ռուս
կառավարութիւնը կալուածոց
մատակարարութիւնը իր վրայ
առնելով տատկալի բեռան մը
տակ մտած է, բայց այնքան
նախանձախնդիր է Հայ եկեղեց-
ւոյ շահերուն որ սիրով կը տա-
նի այդ բեռը... հայերը շատ
գէշ կը մատակարարէին կոր ի-
րենց գոյքերը: Կառավարու-
թիւնը մեղքըցաւ զիրենք եւ օգ-
նութեան հասաւ: ալ ինչ բանէ
կը գանդատիք: Եւ յետոյ Ռու-
սիոյ հայերը Ձարին զաւակներն
են, երբ յանցանք մը գործելու
ըլլան՝ իրենց օգտին իսկ համար
Ձարը կը պատժէ զանոնք: ո՛ր
տեսնուած բան է որ հայրը
իր զաւակը պատժած ատեն դուռ-
սէն միջամտութիւն ըլլայ: Գիտ-
ցած եղէք որ այն ամէն խնդ-
րագրերը զորս հայերը ցարդ
Բէգերապուրկ տեղացուցին՝ մէյ

մէկ գաղտնի հարուածներ են Ձարի քնքոյն սրտին ուղղուած . ու դուք եղբայրացի հայերդ կուզէք կորհրմայ, ձեր խնդրադրով գաղտնի կոթէն բռնել ու սա՛նկ մը գարձնել Ձարին սիրտին մէջ . . . Այն, աղէկ սը Պոլիս չեմ եգեր, ի՞նչ պիտի ըսէին տաճիկները . «սէն հէր վազըթ էրմէնի սէվէր» պար շիւտի օնլար նէլէր եարար Ռուսիա տանէ վազըթ էրմէնի թիւյիւնի պէօյլէ պէօյլէ աշաղը եարար սըն՝ սէնաէն էյի ատամ եօք . ամա նէ վազըթ պիտի ազ սըգըշտիրտին էրմէնի՝ օ՛ վազըթ պաշրնա չըգար . . . »

Ու կաւելցնէ թղթակիցը
« Պ . Մարտիմօֆ եղբայրացուց սը վաղ անցնին այդ խնդրադրէն ու խոստացաւ որ ինքը վեհ . Ձարին պիտի գրէ եւ բացատրէ թէ, թէեւ եգիպտոսի հայերը ասանկ անխորհուրդ շարժում մը պիտի ընէին՝ բայց ինքը համազած է որ ետ կենան : Ներկայք շնորհակալութիւն յայտ նեցին . Պ . Մարտիմօֆի տուած խորհուրդներուն համար եւ միեւնոյն պատիւնեքով զինքը ճարձու գրին . ժամը մէկու կէսին :
« Կարծիք յայտնուեցաւ յատուկ պատգամաւորութիւն մը յղել Գահիրէ, որպէսզի ժողովուրդը համոզէ խնդրադրէն հրաժարի : Այս տեղ ալ միթիւնի կազմակերպիչներ նոյն իմաստով աղգարարութիւն մը պիտի ընդունին :
« Սըբազան Աւաջնորդին, որ մինչեւ վերջը լուծութիւն պահած էր, կարծիքը տակաւին յայտնի չէ :

ԴԻՏ. ԽՄԲ. Ներկաներու մանաւանդ Առաջնորդին այդ պարագային պահած լուծութիւնը որհամակերպութիւն եւ հաստատութիւն կը նշանակէ, մեզ շատ տարօրէնակ կը թուի : Մարտիմօֆի այդ «գուրտ մասալի»-ն չսխալելի պատասխաններ կը սպկուէին :

ԺԱՄՅԱՐԵԱՆԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

ՄՈՍԿՎԱՅԻ ՆԱԶԱՐԱՅԱՆԻ ԴՍԱՐԱՆ

Մոսկուայի թերթերից բաղում ենք բանկիթ Խաչակի ժամհարեանի սպանութեան դատի հետեւալ մանրամասնութիւնները :

Դատը տեղի ունեցաւ Հոկտեմբերի 4-ին Մոսկուայի նահանգական դատարանի 8 բաժնում Ն. Վ. Դաւիթովի նախագահութեամբ :

Մեղադրեալների նստարանի վրայ նստած է պահապի կնիքապալ թիֆլիսի հայահգի Ջաքարթալ քաղաքի մեջնաին Մարտիմօֆ Միտիսեանց, որը մեղադրուած է Խաչակի ժամհարեանի սպանութեան համար : (*)

(*) ԴԻՏ. ԽՄԲ. Ամերիկա հրատարակողը Հայրենիք թերթը քանի մը ամիս առաջ սուտ լուր մը տուած էր, ըսելով որ ժամհարեանցը սպանողը իր ընկերները բանտին փախցուցած են, եւ հասարակութիւնը այդ կազմակերպութեան վրայ հիացած է : Շտաբի թերթին ֆետալներու մասին տուած լուրերն ալ այս օրինակ պոչով սուտեր են արդեօք :

Նրան պատգամուած է երգ. հաւ. Մ. Յ. Խոզաբեւիչ :

Մեղադրուած է պրոկուրորի օգնական Դանիլով :

Նիստը բացուած է ժամը 12ի սկիզբին :

62 վկաներից բացակայում են 20ից աւելի : Այնուամենայնիւ դատարանը որոշում է շարունակել դատը :

Կարգացուած է մեղադրական արձանագրութիւնը :

1932 թ. դեկտեմբերի 15-ին, ժամը 12-ի մօտերը, հայոց եկեղեցի եկաւ բանկիթ Խաչակի Խաչակեան ժամհարեանը : Հինց որ նա բարձրացաւ եկեղեցու շինքը, նրա վրայ յարձակուեց մի ինչ-որ անծանօթ մարդ եւ դաշոյնով մի քանի վէրք հասցրեց նրան : Ժամհարեանն արեւնաթաթաւ ընկաւ սանդուղքի աստիճանների վրայ եւ մնաւ : Եկեղեցու ժամաւորները մէկը, երուանդ Դուրգարեան, բռնեց չարագործին եւ ուղիները օդնոթեցաւ զինաթափ արեց նրան :

Երբ բռնուածը տարուեց տեղական մարի ոստիկանատունը, նրա հաղուածի զրպաններում գտնուեցին 244 ռ. եւ մի քանի կոպէկ եւ Սմոլտի ու Վեստոնի սիւստումի մի մեծ ռեվոլվեր, որի մէջ կար ինք գնդակ :

Դատական քննիչը հարցում փորձի ժամանակ չարագործը խոստովանուեց իւր յանցանքը եւ բացատրեց, թէ ինքը պարսկահայատակ է եւ իւր ազգանունն է Միքայէլ Յակոբեան Սարգսեանց . վերջին տարիները նա ապրում էր Կ. Պոլսում, որտեղից եկել էր Մոսկուա եւ իջեւանել էր Դենիսովի կահաւորութեւ սենեակներում, Ռոսդեմետովենկայում : Հայ լրագրներից ծանօթ լինելով, որ ժամհարեանը հալուած մարդ է, եւ սպանութիւնից վեց օր առաջ զիպուածով հանդիպելով նրան պատասխում, նա պաշտօն խնդրեց, բայց ժամհարեանը կոպտաբար մերժեց : Այն ժամանակ նա վճռեց վրէժ առնել նրանից եւ, տեսնելով նրան եկեղեցու շինքում, իրագործեց իւր մտադրութիւնը : Իւր բոլոր իրեղէնները նա թողել էր Ռեւոլվերեանի եր'աթիւղու կայարանի արանքիցի մօտ, որ պահի, մտադիր լինելով սպանութիւնից յետոյ գնալ Պետերբուրգ :

Սպանուած ժամհարեանի մարմնը բժշկական քննութեան ենթարկուելուց եւ կտրելուց յետոյ հաստատուեց, որ նրան հասցրած էր հինգ վէրք—վրին, կրծքին, մէջքին եւ գոտկանիցին . այդ վէրքերից երկուսը ճանաչուեցան անպայման մահացու :

Կահաւորութեւ սենեակների տէր Դենիսովի, նրա սպասաւորների եւ բնակիչներից ցուցուեցին զանազան պարզուեցան հետեւեալ հանգամանքները .

Իրեն Սարգսեանց անուանողը կահաւորութեւ սենեակներն էր եկել նոյն տարեկան մի մարդու հետ : Սարգսեանցի համար սենեակ վարձողն այդ ընկերն էր, որը լաւ խնամ էր ունեւրն : Այնուհետեւ Սարգսեանցը գնացել էր իրեղէնները բերելու, իսկ ընկերը մնացել էր վարձուած սենեակում եւ սպասում էր նրան : Երկու ժամ յետոյ Սարգսեանցը փրադարձաւ եւ իւր հետ բերեց մի ձամպրուկ եւ ձեռքի կոշիկ : Երբ նա եկաւ, նրա ընկերը հետացաւ կահաւորութեւ սենեակներից եւ այլ եւս չէր գալիս այնտեղ : Ամեն օր Սարգսեանց հեռանում էր ուր—որ եւ վերադառնում էր ուշ . ընդամենի միշտ փակում էր իւր սենեակը : Կահաւորութեւ սենեակներում ապրած արտոյշ ժամանակ նրա մօտ ոչ ոք չէր գալիս, եւ հարեւաններից ոչ

ոքի հետ նա չէր ծանօթանում : Ծանուած էր ճաշարանում : Այնտեղ նրան միշտ տեսնում էին միմեկի եւ միմեկի երկու անգամ նրա հետ էր իւր մի ինչ որ ընկերը, որի հետ նա խօսում էր անծանօթ լեզուով :

Դեկտեմբերի 14-ի երեկոյան Սարգսեանցն ասաց լաքէյ Ալէքսէյ Պետետովին, որ հետեւալ օրն առաւօտեան ինքը գնալու է Պետերբուրգ երեք օրով : Հետեւալ օրը ժամը 11-ին Սարգսեանցը փոքրիկ աշակերտ Իվ. Ապուխովին հրամայեց դուրս տանել ձամպրուկը : Սահակ վարձելով ռեադանեան երկաթուղու կայարանը գնալու համար, նա հեռացաւ : Բեռնակիր Իվան Ֆեդորովի ասելով, Սարգսեանցը ռեադանեան երկաթուղու կայարանն էր գնացել դեկտեմբերի 15-ին, առաւօտեան ժամը 12-ի սկզբին եւ, դուրս չգալով սահնակից, պատուիրել էր նրան վրցնել իրեղէնները եւ պահել մինչեւ այն գրեւորքի մեկնումը, որը դուրս է գնում Մոսկուայից օրուայ ժամը մէկին զէպի կովկաս : Ընդամենի Սարգսեանցն ասաց, թէ ինքը պիտի գնայ իւր ընկերով բերելու :

Երկրորդ հարցում փորձի ժամանակ Սարգսեանցը նոր բացատրութիւններ տուեց :

Նրա ասելով, Մոսկուա գալուց 8 տարի առաջ ինքը բնակութիւն էր հաստատել Կ. Պոլսում եւ զբաղւում էր այնտեղ գործերի առեւտրով : Ուրիշ հայերից իմացել էր, որ կայ մի կոմիտետ : Ոմն ինչօ առաջարկել էր նրան անգամ դառնալ այդ կոմիտետին : Նա համաձայնեց : Խաչած տարաւ նրան մի ինչ-որ տուն, որտեղ ժողուած էին 30 հոգի հայ : Ժողովում խօսում էին Մակեդոնիայում եւ Հայաստանում թուրքերի գործած գազանութիւնների մասին, փող էր հաւաքում հայերին օգնելու համար, իսկ 1902 թ. զարնանը վճռուած էր կոմիտետի անգամները հինգ հոգի ուղարկել Մակեդոնիա, այնտեղ թուրքերի դէմ գործելու համար : Թուրքուկ ճանապարհուած այդ անգամների թուում կար եւ ինքը : Այնտեղ նա միացաւ ապստամբների մի խմբի հետ եւ մասնակցում էր թուրքերի դէմ մղուած կռիւններին, բայց խումբը յետ մղուած եւ կազմալուծուեց : Նա ստիպուած էր փախչել Սոֆիա, որտեղ կոմիտետից հրաման ստացաւ վերադառնալ Կ. Պոլիս : Այնտեղ հասնելուց յետոյ կոմիտետի ներկայացուցիչ Նազար բէկ եւ Պատրիկ-էֆէնդի յայտարարեցին նրան, թէ պէտք է սպանել մի մարդու, եւ այն ժամանակ իսկ վրձակ ձգուել կոմիտետի չորս անդամների միջեւ վրձակն ընկաւ իրեն : Պատրիկ-էֆէնդին ասաց նրան, թէ հետեւալ օրը նա պէտք է ճանապարհ ընկնի զէպի Մոսկուա եւ այնտեղ պայան Խաչակի ժամհարեանին : Իրեւ ճանապարհաձախա Պատրիկ-էֆէնդին տուեց նրան թրքական 35 լրւա, իսկ սպանութեան համար մի դուշոյն յանձնեց : Վիննայում փոխելով անցաղիքը, թրքական փողեր փոխելով ռուսական փողերի եւ գնելով մի ռեվոլվեր, եկաւ Վարշաւա : Վազնուում նա ծանօթացաւ մի հայի հետ, որի անունը չգիտէ եւ որը բերեց հասցրեց իրեն մինչեւ Դենիսովի կահաւորութեւ սենեակները :

Թափառելով Մոսկուայում, Սարգսեանցը զիպուածով մտաւ կուզնեցիկ կամուրջը եւ այնտեղ սեռաւ «բասաժ ձամկարովի» ցուցանակը : Պատասխում էր ինք ինքնաօք, նրան ցոյց տուին Խաչակի ժամհարեանին, որը անցուղաւ էր անում, եւ մարդու պահեց ժամհարեանի դիմագծերը եւ ե-

րեք կերակրի գնում էր հայոց եկեղեցին կատարելու համար իրեն տրուած յանձնարարութիւնը : Այդ բանն յաջողուեց միայն դեկտեմբերի 15-ին : Եթէ իրեն չընէին, նա կգնար Պետերբուրգ, իսկ այնտեղից կփախչէր արտասահման : Մոսկուայում նա չի ունեցել ոչ թէ միայն գործակիցներ, եւ նոյն իւր ծանօթներ :

(Շարունակելի)

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ

— Գ Գ —

Նմանոյ 3-4 ին փրովանէնսի մէջ գումարուած Ազգային Պատգ. Ժողովոյ առթիւ տեղի ունեցած քանի մը միջադէպերը զորաւոր ապացոյց մը տուին թէ՛ հանրային կարծիքը մեռած չէ եղեր եւ իր վճռական դատաստանը արձակած է եղբայրասպանութեան հեղինակներու դէմ :

Սարգսեան կոպտիկորոք իր հրաւերադրի մէջ հրաւիրած էր ի միջի այլոց Ամերիկայի Հայ Թերթերու Խմբագիրներն ալ . այս ընդհանրական հրաւերէն օգտուելով, Ամերիկայի հայութեան կողմէ դատաւարութեւ եւ հայութեան նկատուած Սապահ-Իլիւ կոչուած անձն ալ ինքզինքին իրաւունք տուած էր ներկայ գտնուել «Ե. Հ.» անուն քուրճի կտար մը հրատարակելուն համար : Ժողովականներու մեծագոյն մասը որ կը բաղկանային Հնչակեանների եւ Հնչակեան հոմակիր չէզոքների շատ զայրացան աւտոր ներկայութիւնը տեսնելով, եւ սակայն հանդուրժեցին ժողովը իր նըպատակէն չեղեցուցած չըլլալու սիրոյն համար միայն :

Ժողովոյ դիւանի ընտրութեան պահուն Ասենապետի ընտրութեան յետոյ, Նազարեկեան մը անմիջապէս Սապահ-հը կառավարեց իրեւ տախտակի եւ հոն ներկայ եղող քանի մը Դրօշակեանները կը ձայնակցին . եւ կը պահանջեն որ քուէի դրուի Ասենապետ Տօքթօր Սրչակունի կը հարկադրուի քուէի դնել, եւ ահա 90 պատգամաւորներով կազմուած ժողովոյ մէջէն միայն չորս ձեռք կը բարձրանայ :

Փրովանէնսի Հայ գաղութի կողմէ 12 անձերէ բաղկացեալ յանձնախումբ մը ընտրուած է եղեր ժողովոյ կարգադրութիւնները ընելու պաշտօնով ուրիշ երկուքը Հնչակեան 2ը Դրօշակեան եւ 8ը չէզոք. սոյն յանձնախումբը հրապարակային ժողովոյ առթիւ աստիպարները նշանակելու պահուն ներկայ եղող Դրօշակեանները կառավարկին Սապահը իրեւ տախտակ, եւ ամեն ճիշդ կը թափեն յաջողութեւնը . սակայն յանձնախումբի ոչ-կուսակցական 8-ը անդամներն ալ միաձայն եւ վճռական կերպով կը յայտարարին թէ «Չիթճեանի եւ Շահինի յալումը անոր ճակատէն դուրս չէ ցածքած եւ վտան է որ անոր բնմ ելած եւ բերանը բացած պահուն ժողովոյ պահանջներէն ինքնաւոր պիտի զայրանայ կը արեւհեղութեանց թատր մը պիտի զարձուէ սրահը» եւ կորոչն անոր անունը անգամ չի յիշել : Հակառակ այդ որոշման, միւր անյիշաչար կղերականները անոր անունն ալ կը գնին աստիպարներու ցանկին մէջ այս լուրը կը տարածուի հասարակութեան մէջ, կայծակի արագութեամբ . եւ ահա հասարակութեան զայրոյթը իր գաղթի նախկէտին կը հասնի, իրաւաւորութեւ կը սկսի ժողովոյ դեմ մէջ . եւ չորս կողմէն Հնչակեան եւ ոչ-Հնչակեան խումբեր կին թէ մարդ կը սպանան ինչի օրէնքով պատմել եթէ

երբէք հանդէսին Սապար խօսելու հրաւիրուի : Հրապարակային ժողովը բացուած պահուն Աստուածային Հայր սուրբը տեսնելով ժողովը բացուած պահուն Սապար խօսելու հրաւիրուի : Հրապարակային ժողովը բացուած պահուն Սապար խօսելու հրաւիրուի :

Փրօֆէսորներ կազմակերպելու խնդիրը կարգադրուած էր : Երբ իրենց կիսակաշիկները հանելու ժամանակ Սապար խօսելու հրաւիրուի : Հրապարակային ժողովը բացուած պահուն Սապար խօսելու հրաւիրուի : Հրապարակային ժողովը բացուած պահուն Սապար խօսելու հրաւիրուի :

Այս կատակները կատարուեցան թէ այս մարդիկը գիշեր ցերեկ ուրիշ կը ներթափանցէին իրենց մէջ : Եւ այդ է պատճառը որ իրենք կը վախճան, «գողը կը կարծէ թէ ամէն մարդ գող է» :

Մինչդեռ իրենց կարծեցողի հակառակորդները ոչ միայն մտքերուն չեն անցունել որ երբեք պատճառ չայդ բարոյապէս արդէն մեռած եւ պատժուած արարածը այլ նաեւ իրենց ամբողջ ճիգը թափած են ու կը շարունակեն իրենց թափու մեղքներուն աջ վրէժ-ինդրութեան արդար զայրոյթը որ ինքնաբերաբար առաջ եկաւ հայ երիտաւորութեան մէջ :

Ամերիկայի Դոքտորներն ալ իրենց վարկը կորսնցուցին բոլորովին կուսակցական ներքին հաշիւներէ մզնալ այս եղբայրասպաններուն պաշտպան եւ քաջալիկ ըլլալուն համար :

ՈՐՄԷՆ

Պոսթօն, 10 հոկտ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կիրակի Հոկտ. 26-ին պիտի կատարուի Եկեղեցական կալուածներու գրաւման առթիւ ինկած Ռուսահայ նահազակներու եւ 96 թիւին կոտորածներու մէջ ինկած Տաճկահայ նահազակներու յիշատակ :

ՀՈՒՆԶԱՆԳԻՍ ԵՒ ՄԴԱՀԱՆԴԻՍ

Հոգեհանգիստը պիտի կատարուի տեղւոյն Ս. Սարգիս Եկեղեցւոյ մէջ ժամը ճիշդ 9-ին : Երբեք յետոյ պիտի մեկնուի ՍԱԵՏԻՆԵՆԻ քաղաք, ուր պիտի կատարուի Սգահանգիստը : Պիտի ատենախօսեն Պ. Պ. Խոսէպուր-եան եւ Մարգարիտուհի : Ատենախօսութիւնը ազատ է, բայց խօսիլ փափաքողները ձօնաւոր պարտին լուր տալ Յանձնախումբին անդամներէն Պ. Պ. Զանկիւրեանի եւ Մարգարիտուհիին : Յանձնախումբը կը հրաւիրէ վառ-նայի Հայ երկսեռ հասարակութիւնը ներկայ գտնուիլ եւ պատուել նահա-տակներու յիշատակը :

ՅԱՆԶԱՆԳԻՍԻՍ

ԱԶԳԱՅԻՆ

Եւրոպայի Հայոց Առաջնորդ Գեորգի Սեֆիւրեան Զորանայի Արդիւն, Աւստրո-Հունգարիոյ եւ Զուիցերիոյ Հայ գաղթականութիւնները հրաւիրած է բողոքելու Ռուս կարաւանութեան դէմ եկեղեցական կալուածներու գրաւման մասին :

Բարեւի հայերը որոշած են, կ'ըսէ Լ'Առաքել, ջարդի խնդրա-գիրք մը շրջել : Միւս գաղթական-ներութիւններն ալ նոյն օրինակին պիտի հետեւին անյապաղ :

ԹԱՅՄԱՐԶԻ մէկ թղթակիցը կը պարտաւէ Պուլկարիոյ Յոյն եւ Հայ հարուստները որ չեն նպաս-

տեր մարեթնացի գաղթական-ներուն :

Պէտք է հասկցնել անգլիական այդ մեծ օրաթերթի խմբագրութեան թէ՛ Պուլկարիոյ հայե-րը տեղ տեղ ներկայացուցանելով կոկիկ գումարներ հասցնելէ զատ, պուլկարներու նախաձեռնութեամբ բացուած հազանավորութեանց սիրայօժար եւ առատօրէն մատակցած են Մակեդոնիոյ դժբաղդները նպաստաւորելու :

ՊՐՈԼԵՍՏԻ առաջնորդ Տ. Յովհաննէս Եպիսկոպոս Արշարունի որ Ռուսահայոց հովուութեան պաշտօնին կոչուած էր, ինչ ինչ դժուարութեանց պատճառաւ հրաժարած է, եւ պատրիարքա-րանը անոր հրաժարը ընդունելով որոշած է Տ. Ներսէս Ասլան-եանը կոչել Ռուսահայոց հո-վուութեան պաշտօնին :

Թէեւ նորին սրբազնութիւնը Պուլկարահայոց ապագայ առաջ-նորդն է, բայց առժամանակեայ կերպով կրնայ վայել Ռուսահայոց հովուութեան պաշտօնը ու չեղոր կեմարով գործել հոն եւ առաջ-նորդական ընտրութիւնը կատա-րել տալ : Այս տեսակետով Ռուս-մանհայր Պուլկարահայոց մէ-ւելի բաղդաւոր են որ ինքզինք առաջնորդ ընտրել տալու տեն-դէն բռնուած վեղարաւոր մը-րենց չը շրջուի :

ՎԵՆԵՏԻԿԻ Միթրարեանց տը-պարանէն շնորհակալութեամբ ոտացանք «Ս. Էլմիածին» անու-նով գրքոյ մը, որ իր գեղեցիկ նկարներով եւ պատմական էջե-րով Վենետիկի Հայերուն հաւ-բաւին արժանի գործ մը կը ներ-կայանայ, որուն առաջին էջին վրայ Հայրիկին պատկերին տակ հետեւեալ Ձօնը կը կարդանք,

«Առ Ն. Վահագնութիւն Տ. Տ. Մկրտիչ Ա. Մայրապոյն Պատրի-արք եւ կաթողիկոս Ամենայն Հա-յոց, մեծարանօք նուիրի ի հարց Միթրարեանց Վենետիկ» :

Գինը 2 1/2 ֆր.

— Պուլկարիոյ Առաջնորդական ընտրութեան համար Սօֆիա գումարաւ իր 10 պատգամաւորները եւ չորս աւագերէցները Սօֆիա մեկնեցան : Վառնայի թաղ. խորհուրդն ալ իր (չէ՛ փո-զովրդական) Մարգիտ Գալուստի-եանը շրջեց Տէր Մարտիրոս քա-հանային հետ : Բոլորովին ապօ-րինի եւ խաղախ միջոցներով իւր պարգումաւոր գացող այդ մարդուկը, կ'երեւայ թէ ինք եւ իր աները իրենց քսակէն պիտի վճարեն Առաջնորդարանի պիւտ-ճէին համար կանխաւ որոշուած տարեկան 1500 ֆր.ը :

ՍԻԱԿ Է տեղական հայ թերթի մը այն լուրը թէ կիրակի օր պուլկար երեսփոխանաց ընտրու-թեան հետ տեղւոյ ազգ. վար-ժարանի հոգաբարձութեան ըն-տրութիւն ալ տեղի կունենայ : Իսկ թաղ. խորհուրդն անունով ընտրելիներ ցոյց տրուելուն ինչ թողուն նպատակներով ը-լալը բացատրել հարկ չէ :

ՄԱՍՆԱՌԻ ԴԱՍԵՐ

Հայ ուսուցիչ մը պատրաստ է ըս-տանձնել մասնաւոր դասեր Հայերէնի եւ Ֆրանսերէնի : Փափաքողներուն կա-րող է աւանդել նաեւ Իտալերէն եւ Ռուսերէն :

Դիմել Իրաւունքի խմբագրատունը :

ԱՆԳՈՒՆԳԸ...

(ԻՐԱՆԱՆ ԿԵԱՌԻ ՊԱՏԿԵՐ ՄԸ)

— «Ե՛ս... Ե՛ս, մարգե՛ր ես բացի այդ փոսը... ես թաղեցի հարազատ զաւակս անոր մէջ... ա-նարգ ձեռքերս գործեցին այդ ոճիւրը... Վա՛խ, անէ՛ծք ինձի, հազար անէ՛ք... Մի՛ գար, մի՛ գար Պաղտօյի աղջիկ, մի՛ մաներ այս սեմերէն ներս... սրելիք լաւելիդ արեւնը կը հոտի...»

Կինը չը կրցաւ հանդուրժել : Դողդողալով Մաթոս Ախպարին նորէն մօտեցաւ ու ձայնեց.

— Մաթո՛ս, Մաթո՛ս... :

Կնոջ ձայնը ցնցեց կարծես հէզ հիւանդն, որ ան-միջապէս աչքերը բացաւ ու յիմարի մը պէս իր շուրջը նայեցաւ :

— Ինձի նայէ՛, Մաթո՛ս, կրկնեց կինը խռովա-տանջ կողմակողմ մը. տե՛ս, կը ճանչնա՞ս թէ ո՛վ եմ... կը յիշե՞ս :

Ու յօգոսնեցով մը Մաթոս Ախպարին ձեռքը բռնեց, որ կրակներու մէջ էր կարծես :

— Օ՛հ, մարդկային քսաններ ի՞նչ տեսարան... :

Մաթոս Ախպար ստակուծով մը նայուածքը մէկգի-ղարձաց այնպիսի մէկու մը պէս, որ ոճրագործին դանակը կը նշմարէ իր սրտին ուղղուած :

Թշուառ մարդը ջանաց բռն մը. խօսք մը հանել բերնէն... ո՛չ չը կրցաւ, լեզուն իր քիմքին փա-կած էր ու աներեսով ձեռք մը կոկորդը կը ճըզ-մէ՛ր, կը խղզէ՛ր :

Այդ պահուն սննդիկն դուր բացուցեցաւ ու ներս մտաւ Սթեֆանքայ իր երկու զաւակաց հետ : Պուլ-կարունին նենգաւոր նայուածքով մը ամուսնոյն մահակալին մօտ գտնուող անձանքի կնոջ երեսը նայեցաւ եւ քիթ բերանը ծոմակած ձեւով մը հար-ցուց.

— Կրնամ դիմաւ ի՞նչ ո՛վ ես դուն :

Սննդաթի կինը չը պատասխանեց :

Ան ատեն ծերունին առաջ սննդներով ըսաւ :

— Թուրքերէն չը հասկնար, հանրմ :

— Սննդ է նէ դուն հարցուր. «ո՞վ է ինքը» :

Ծերունին հարցուց :

— Աստուած գիտէ... մըմնջեց կինը :

— Ի՞նչպէս պատահաւ է այդ, Տիկին, բացա-գա՛յնց Սթեֆանքայ նեղացած կողմակողմ մը : Մա-նուանդ ի՞նչ համարձակութեամբ այս սեմերէն ներս կը մտնա, երբ չես ուղիւ ով ըլլալդ յայտնել :

Անձանքի կինը շարժուած մը անգամ չըրաւ :

Բեռնակիր ծերունին, որ բոլոր սրտով կատէր այդ նենգաւոր արարածը, չը կրցաւ համբերել : Ծա-կաւոր քրտնած էր ու շունչը կը խղզուէր կարծես :

Պահ մը Մաթոս Ախպարին նայեցաւ, որ աչքերը գոցած կը տանջուէր խղճին հետ, յետոյ անձանքի կնոջը նայեցաւ, որ թշուառութեան ներքեւ ընկ-ճուած էր, նայեցաւ, տոյ՛ս... ու գոչեց.

— Ի՞նչ կը պատուիս ինքզինքդ... այդ կինը բա-ցարձակ իրաւունք ունի այս սեմերէն ներս մտնե-լու, որովհետեւ Աստուծոյ ու մարդերու առաջին յաւիտեան իրեն հետ ապրելու ուխտող մարդ մը կայ հոս... :

— Ինչպէ՞ս ընդհատեց Ստեֆանքայ :

— Ձը հասկցա՞ր... ըսել կուզեմ թէ մահակա-լին մէջ պատկող մտեղուն կինն է անիկա, բացա-յայտեց ծերունին քիմքովով մը :

Սթեֆանքայ շրթունքները խաճաւ ու բառ մը չը կրցաւ դանել :

Ու այդ պահուն Մաթոս Ախպար նորէն սկսաւ զատանցել :

— Սթեֆանքայ, Սթեֆանքայ... մէկդի, ա՛խ, մէկդի տար գանալդ... հետէ չուանը... մեղ-քեցի՛ր, մեղքեցի՛ր... մի՛ խղզիք խղզե՛ր զաւակս... Աստուած կը տեսնէ... :

«Բա՛յր... Ի՞նչ ըրիր, Սթեֆանքայ, ի՞նչ ըրիր... անարգ ձօր մը ձեռքով խղզել տուիր զաւակը... ա՛հ, հո՛ն, հո՛ն... պարտեցին մէկ անիկան է... : Ծո՛ւտ, չո՛ւտ, Պաղտօյի աղջիկ, գնա՛՛ բաց այդ փոսը... ուրիշ տեղ մի փնտռեք : Գնա՛՛ անոր վրայ պրցունքը թափէ, իսկ իմ վրաս անէ՛ք...»

Անձանքի կինը կեցած տեղը շարժուած մը ըրաւ, երբեքուց ու ինկաւ մահակալին տակը : Ծերունին անմիջապէս բռնեց զինքն ու գոչեց.

— Ի՞նչ եղար, աղջիկս, ինչքե՞ր վրաք ժողով... անիկայ առքութիւնն ի՞նչ բռնեց չհասկնար :

— Ձէ՛, չէ՛... Աստուած սիրոյն ըլլա՛, մըմնջեց անձանքի կինը՝ կէս մը աչքերը բռնալով : Ծառայի տղան իր մէկ հատիկ զաւակն վրայ կը խօսէր... Ո՛հ, ձայն տուէ՛ք իրեն, հարցուցէ՛ք, քննեցէ՛ք... արդարութեամբ թող երեսան երկն :

(Շարունակելի)

